ՀՌԵՏՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հռետորական արվեստը հազարամյակների պատմություն ունի։ Ավելին, դեռևս հին աշխարհում պերճախոսությունը ոչ միայն բուռն զարգացում է ապրել, այլև իր տեսական հիմնավորումն է գտել մի շարք աշխատություններում, որոնց գլուխգործոցն, անշուշտ, պետք է համարել Արիստոտելի «Հռետորությունը»[1]։

Սակայն չի կարելի ասել, թե հռետորության պատմությունը վկայում է վերջինիս անընդհատ ազդեցության ու վերելքի մասին։ Հռետորությունը հաճախ ներկայացվել է որպես մի արվեստ, որը սովորեցնում է ամեն ինչ ասել և ոչինչ չասել, որպես դատարկ բառախաղ և այլն։ Այս հանգամանքն ունի իր սոցիալական և իմացաբանական արմատները, որը հատուկ քննության նյութ կարող է ծառայել։ Մեր օրերում որոշ հետազոտողների մոտ աշխույժ հետաքրքրություն է առաջացել դեպի հռետորությունը։ Լույս են տեսնում հետազոտություններ ոչ միայն հռետորության վերաբերյալ[2], այլև հռետորության և փիլիսոփայության[3], հռետորության և սեմանտիկայի[4], հռետորության և այլ բնագավառների[5] փոխհարաբերության շուրջը։ Ավելին, արդեն երրորդ տարին է, ինչ Պենսիլվանիայի համալսարանը (ԱՄՆ) հրապարակում է հատուկ հանդես՝ «Փիլիսոփայությունը և հռետորությունը»[6] խորագրով։

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հռետորության և տրամաբանության փոխհարաբերության հարցը։ Հռետորության նկատմամբ մեր օրերում գիտական զգալի հետաքրքրությունը իմացաբանական տեսակետից պետք է բացատրել հետևյալով։ Մաթեմատիկական տրամաբանության բուռն զարգացումը հանգեցրեց գիտելիքների գրեթե բոլոր բնագավառների ձևականացման ձգտմանը։ Սակայն պարզվեց, որ գիտելիքների ձևականացումը ամենևին էլ անսահմանափակ չէ և սակավ չեն այն բնագավառները, որոնք ենթակա չեն անգամ հարաբերականորեն լրիվ ձևականացման։ Ուստի փիլիսոփաները և տրամաբանները նկատեցին, որ միշտ չէ հնարավոր դիմել մաթեմատիկական (ձևականացված) տրամաբանությանը, որ վերջինիս կողքին իր կենսունակությունն է պաշտպանում նաև ոչ ձևականացված, բովանդակային տրամաբա-

---

[1] Аристотель, Риторика. Перевод Н. Скворцова, М., 1894.

[2] *Օրինակ,* W. S. Howell. Logic and Rhetoric in England 1500—1700. Princeton, 1956; Mariam Joseph Sister. Rhetoric in Shakespiare's Time. New York. Harcourt. Brace and World, Inc. 1962.

[3] J. A. Richards. The Philosophy of Hhetoric. New york, Oxford, 1965. G. Campbell. The Philosophy of Rhetoric. London, 2 vols.

[4] B. Aly. The Rhetoric of Semantics, in The Quarterly Journal of Speech, 29, 1943.

[5] E. Black. Rhetorical Criticism. A Study in Method. New York. Macmillan. 1965.

[6] „Philosophy and Rhetoric". Editor H. W. Johnstone. The Pennsylvania State University Press.

նությունը։ Այս էլ իր հերթին որոշ հետազոտողների դրդեց նորից ուշադրություն դարձնել հռետորության վրա, որն անմիջական սերտ կապի մեջ է բովանդակային տրամաբանության հետ և կամ էլ, ինչպես ոմանք են ենթադրում, հանդես է գալիս որպես փաստարկման տրամաբանություն[7]։

Հռետորության և տրամաբանության փոխհարաբերությունն առաջադրում է պրոբլեմների մի ամբողջ համալիր, որոնք կարող են մի շարք ինքնուրույն հետազոտությունների նյութ ծառայել։ Մենք կանգ կառնենք այդ հարցերից միայն մի քանիսի վրա։

Հայտնի է, որ երբ հռետորն առաջադրում և ցանկանում է ապացուցել որևէ դրույթ, այն անպայման պետք է անթերի լինի տրամաբանական տեսակետից։ Դժվար է հավատալ հռետորին, որը թույլ է տալիս տրամաբանական սխալներ։ Հռետորը պետք է կարողանա մտքի տրամաբանությունը, մտքի ճշգրտությունը զուգակցել պերճախոսության արվեստի հետ։ Ըստ որում պերճախոսությունն ամենևին էլ չի նշանակում ճոռոմախոսություն։ Իսկական պերճախոսությունը ճոռոմախոսության թշնամին է։ Հռետորության, պերճախոսության համար բնորոշ է ճշմարտության և համոզչության ներդաշնակությունը, որը պահանջում է տրամաբանորեն շաղկապված մտքերի պարզ արտահայտություն[8]։ Հռետորության պատմությունը, պերճախոսության նշանավոր ներկայացուցիչների օրինակը, ցույց են տալիս, որ հռետորության մեջ կարևորը ոչ թե արտաքին ձևն է, այսպես կոչված՝ արտաքին էֆեկտը, այլ ճառի իմաստը, նրա բովանդակությունը։

Մեզ հասած տվյալների համաձայն, առաջինը հին աշխարհի մեծ փիլիսոփա Արիստոտելն էր, որ տեսականորեն պաշտպանեց խոսքի տրամաբանական բովանդակությունը և այդ տեսանկյունից փորձեց շարադրել հռետորության մասին իր ուսմունքը։ Արիստոտելը հիմնական ուշադրությունը նվիրում է ճառի ապացուցողական կողմի վրա։

Բնորոշ է այն հանգամանքը, որ որոշակի նշանակություն տալով հռետորական արվեստի ոճին, չթերագնահատելով նրա նշանակությունը, Արիստոտելը բոլոր դեպքերում ցանկանում է ճառի ոճական կողմը զուգակցել տրամաբանական էության, ապացուցողական արվեստի հետ։ Հերքելով սոփեստներին, հանդես գալով նրանց այն թեզի դեմ, որ հռետորության մեջ կարևորը հարցի համոզիչ լինելն է, Արիստոտելը ելնում է ճառի բովանդակության և ձևի ներդաշնակությունից, պերճախոսության եղանակները բխեցնում է բովանդակությունից։

Ցիցերոնը ընդգծում է ճառում տրամաբանական իմաստի կարևորությունը, նշում, որ հռետորը պետք է տակտի չափը պահպանի ոչ միայն բովանդակության, այլև դրա արտահայտչական ձևերի նկատմամբ[9]։

Ուշագրավ է ռուս մեծ գրող և գիտնական Լոմոնոսովի այն միտքը, որ պերճախոսությունը ոչ թե պետք է հիմնված լինի ինչ-որ առանձին ձևերի վրա՝

---

[7] Ch. Perelman and L. Olbrechts-Tyteca. Traite' de L'Argumentation, Paris, 1958.

[8] Վիլհելմ Լիբկնեխտը Մարքսի մասին իր հուշերում գրում է. «Հարկավոր է մտածել տրամաբանորեն և պարզ արտահայտել իր միտքը»,—ներշնչում էր նա մեզ «երիտասարդներիս»...» («Նրանց պարզությունն ու մարդկայնությունը», Երևան, 1965, էջ 317)։

[9] Տե՛ս Цицерон, Сборник речей, М., 1958.

առանց տրամաբանական հիմքի, այլ պետք է որպես հիմք ընդունել տրամաբանական կառուցվածքը՝ նրան տալով հռետորական ձև։ Տրամաբանական պետք է լինի ճառի էությունը, հռետորական՝ արտահայտչական ձևը[10]։

Ռուս հեղափոխական-դեմոկրատ Գերցենը հանդես էր գալիս այնպիսի հռետորության դեմ, որը չի բխում քննարկվող նյութի բովանդակությունից, նա չէր ընտրում գիտական ճշմարտությունների այնպիսի շարադրանք, որոնք գտնվում են, այսպես կոչված, հռետորական-բանասիրական ոճի ազդեցության տակ և որն ավելի շատ դաստիարակում է բառեր և ոչ թե հասկացություններ։ Այդպիսի հռետորությունը Գերցենն անվանում է ձևական։

Հռետորական արվեստի բովանդակության, տրամաբանական էության վրա հատուկ ուշադրություն են դարձրել Վ. Գ. Բելինսկին, ռուս հայտնի իրավաբաններ Պ. Ս. Պորոխովշչիկովը, Ա. Ֆ. Կոնին և ուրիշներ։

Եթե հռետորությունը մի կողմից սերտորեն առնչվում է համոզման հետ, ապա մյուս կողմից հայտնի է, որ տրամաբանության հիմքն ապացուցումն է։ Ոչ մի միտք չի կարող տրամաբանական լինել, եթե այն հիմնավորված չէ, ապացուցված չէ։ Այս կապակցությամբ հարկ է նշել բավարար հիմունքի օրենքի տրամաբանական-իմացաբանական կարևոր նշանակությունը։ Այդ նշանակությունը մենք տեսնում ենք այն բանում, որ այդ օրենքը պահանջում է յուրաքանչյուր մտքի, յուրաքանչյուր դրույթի, յուրաքանչյուր թեզի հիմնավորվածություն։

Նշելով հռետորության սերտ առնչությունը համոզման հետ, մյուս կողմից էլ՝ տրամաբանության առնչությունը ապացուցման հետ, չպետք է այդ երկուսի՝ հռետորության և ապացուցման միջև անջրպետ նկատել։ Վերջին հաշվով, որևէ մտքի, որևէ դրույթի ապացուցումն ինքնանպատակ չէ։ Եթե անգամ մենք ելնում ենք այն բանից, որ տվյալ թեզի ապացուցումը ճշմարտության բացահայտում է, այնուամենայնիվ, չի կարելի ասել, թե եթե հետազոտողը ճշմարտությունը բացահայտել է իր համար և ապացուցել խիստ տրամաբանական ճանապարհով, ապա դրանով նա ավարտել է առաջադրված խնդիրը։ Ապացուցվող ճշմարտությունը, նոր հայտնագործված դրույթի ճշմարտությունը, սոցիալական նշանակություն, հասարակական իմաստ է ստանում միայն այն դեպքում, երբ ճշմարտության մեջ նաև համոզում ենք, երբ ապացուցված դրույթը մնում է ոչ միայն որպես ապացուցողի սեփականություն, այլ այն վերածվում է նաև ունկնդիրների, ուրիշների, վերջին հաշվով սոցիալական խմբի կամ ամբողջ հասարակության, մարդկության սեփականությունը։ Ահա թե ինչու անհրաժեշտ է սերտ առնչություն տեսնել տրամաբանության և հռետորության միջև, և պետք է ենթադրել, որ հռետորությունն ու տրամաբանությունը միավորվում են փաստարկման հիմքի վրա։ Փաստարկել նշանակում է, ոչ միայն տրամաբանորեն ապացուցել դրույթը, այլև համոզել դրույթի ճշմարտության մեջ։

Այստեղ պետք է տարբերել երկու կարգի ճշմարտություն՝ փաստական և տրամաբանական։ Փաստական ճշմարտությունը՝ F, մտքի համապատասխանությունն է օբյեկտիվ իրականությանը։ Տրամաբանական ճշմարտությունը՝ L, այն է, որով օժտված է մի շտ ճշմարիտ ասույթը։ Այլ կերպ ասած՝ տրամաբանական ճշմարտությունը մտքերի կանոնավորությունն է։ Տվյալ միտքը կա-

---

10 Տե՛ս М. В. Ломоносов, Полное собр. соч., т. 7, М., 1952.

ղող է համարվել միշտ-ճշմարիտ, եթե այն կամ իր ձևով համապատասխանում է տրամաբանության այս կամ այն օրենքին, կամ էլ կարելի է տրամաբանական տվյալ համակարգի հասկացությունների և կանոնների օգնությամբ հանգեցնել որևէ տրամաբանական օրենքի։

Երբ մենք նշում ենք, թե ճշմարտությունը սերտորեն առնչվում է տրամաբանության հետ, ապա պետք է տարբերակել տրամաբանական տարբեր համակարգեր։

Հայտնի է, որ բովանդակային տրամաբանությունը և, առաջին հերթին, դիալեկտիկական տրամաբանությունը, ինչպես և ավանդական-ձևական տրամաբանությունն իրենց համակարգերը ստեղծում են կենդանի, խոսակցական լեզվի հիմքի վրա։ Մինչդեռ մաթեմատիկական տրամաբանությունը իր համակարգերը ստեղծում է արհեստական լեզվի հիմքի վրա։ Այդ պատճառով էլ հռետորության գործոնը տարբեր նշանակություն է ստանում տարբեր պայմաններում։ Հռետորության հետ գործ ունենք այն դեպքում, երբ օգտագործում ենք կենդանի խոսակցական լեզուն, իսկ երբ գործ ունենք արհեստական լեզվի հետ կամ արհեստական լեզվի հիման վրա ստեղծված համակարգերի հետ, ապա հռետորության գործոնը իրականում իր ուժը կորցնում է։

Հայտնի է, որ դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանության տեսանկյունից բառը սերտ կապի մեջ է հասկացության հետ, նախադասությունը՝ դատողության և ընդհանրապես լեզուն՝ մտածողության հետ։ Այդ կապը սկզբունքորեն համարվում է դիալեկտիկական միասնություն և արտացոլվում, արտահայտվում այն բանում, որ լեզուն մտքերի առաջացման, ձևավորման, գոյության և արտահայտման միջոց է։ Ընդ որում, այս բանաձևը ցույց է տալիս լեզվի և մտածողության ինչպես գենետիկ, այնպես էլ կոմունիկատիվ կապը։ Գենետիկ կապն արտահայտվում է նրանով, որ չնայած մարդկային ուղեղում կարող են լինել և գոյություն ունենալ մտքի և խոսքի ձևավորման կենտրոններ, այնուամենայնիվ, այդ կենտրոնները միակցվում են իրար։ Մարդու աշխատանքային գործունեության ընթացքում միտքը և խոսքը միմյանց հետ հաստատում են սերտ կապ[11]։

Միևնույն ժամանակ չափազանց կարևոր է խոսքի կոմունիկատիվ ֆունկցիան, այսինքն՝ մտքերի հաղորդակցման միջոցների դերը։ Առանց լեզվի, առանց բառերի, դարձվածքների ոչ միայն մենք չենք կարող ձևակերպել և պահել մեր գիտակցության մեջ որևէ միտք, այլև այն չենք կարող դարձնել ուրիշների սեփականությունը։ Իսկ եթե միտքը մնում է որպես միայն մեր սեփականություն, այն չի դառնում ընդհանուրինը, չի կիսվում ուրիշների հետ (նկատի ունենք ոչ միայն ժամանակի որևէ կարճ գործոն, այլ ընդհանրապես), ապա դժվար թե այդպիսի միտքն ունենա գործնական և իմացաբանական կարևոր նշանակություն։

Սակայն չափազանց կարևոր է և այն, որ միայն նշված գործոններով չի սահմանվում լեզվի, խոսքի դերն իմացության պրոցեսում։ Խոսքի միջոցով հռետորը ոչ միայն դրսևորում է իր միտքը, այլև արտահայտում է իր զգացմունքները, զգայականությունը, հուզականությունը։

Երբ տրամաբանորեն ձևակերպում ենք որևէ միտք և ցանկանում ենք այն կիսել ուրիշի հետ կամ դարձնել նաև նրանց սեփականությունը, հասցնել ուրի-

[11] В. Пенфильд, Л. Робертс. Речь и мозговые механизмы. Л, 1964.

չի գիտակցությանը, ապա այդ միտքն արտահայտում ենք որոշակի լեզվական բառերի, դարձվածքների օգնությամբ։ Այդ դեպքում տեղի է ունենում մտքի փոխանցումը մեկից մյուսին, ստեղծվում է, այսպես ասած՝ հաղորդակցություն երկու գիտակցական կենտրոնների միջև։ Իսկ քանի որ որևէ տրամաբանական փաստ կարող է իր դերը շատ ավելի լավ կատարել, երբ այն ոչ միայն ազդում է մարդկանց գիտակցության, այլ նաև զգայականության վրա, հուզում է մարդկանց, ուստի խոսքը հատուկ կարևոր նշանակություն է ստանում։

Հռետորական արվեստում միևնույն հասկացությունը կրկնելով տարբեր բառերի միջոցով, հռետորն ավելի հուզական է դարձնում իր խոսքը և դրանով իսկ ավելի մեծ հնարավորություն է ունենում ոչ միայն տվյալ միտքը հասցնել ունկնդրին, այլև ազդել նրա զգացմունքների վրա։

Միևնույն հասկացությունն արտահայտելու համար տարբեր բառերի օգտագործմամբ առաջադրվող դրույթը շեշտելը և խոսքը շատ ավելի էմոցիոնալ դարձնելը հայտնի էր դեռևս հին հույներին և հռոմեացիներին, որոնք իրենց արվեստի հռետորական զինանոցում հաճախ էին գործածում հասկացության և բառի փոխհարաբերության գաղտնիքները։ Դեմոսթենեսի «Խաղաղության մասին» ճառում կա մի նախադասություն. «Այդպիսին են իմ կանխատեսած դեպքերից այդ երկուսը. դրանք ապացուցեցին իմ հավաստիացումների իսկությունն ու ճշմարտությունը, դրանք իմ կողմից պարզաբանված են եղել իրականության հետ լիակատար համաձայնությամբ»։ Այստեղ մենք գործ ունենք մի հասկացության հետ, որը տարբեր բառային արտահայտություններ է ստանում. «իսկությունն» ու «ճշմարտությունը» նույն իմաստն են արտահայտում։ Եթե մենք հավատում ենք մի որևէ մտքի իսկությանը, դրանով իսկ ցույց ենք տալիս այդ մտքի ճշմարտությունը։ Ավելին, ինչպես հայտնի է, ճշմարտության, որպես փիլիսոփայական հասկացության, վերաբերյալ տարբեր տեսակետներ են գոյություն ունեցել փիլիսոփայության պատմության մեջ։ Արիստոտելի համապատասխանության տեսության (այդ տեսությունը փիլիսոփայության մեջ անվանվում է կորեսպոնդենցիայի տեսություն) համաձայն ճշմարիտ է այն միտքը, որը համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը և կեղծ է այն միտքը, որը չի համապատասխանում դրան։ Իր նշված ճառում Դեմոսթենեսը ելնում է ճշմարտության այսպիսի ըմբռնումից։ Ըստ որում պետք է նկատել, որ համապատասխանության տեսությունը միանգամայն հարիր է առողջ բանականությանը։ Այսպես հասկանալով ճշմարտության իմաստը, Դեմոսթենեսն «իսկությունն» ու «ճշմարտությունը» օգտագործում է որպես «իրականության լիակատար համաձայնության» համանիշ։

Մերկացնելով Կատիլինային, Ցիցերոնը գրում է. «Դու, Կատիլինա, ինչի՞ վրա կարող ես հույս դնել, եթե գիշերվա մթությունն անգամ ի վիճակի չէ թաքցնելու քո պիղծ ձեռնարկումները, ոչ էլ մասնավոր տունը կարող է իր պատերի ներսում պահել քո դավադիրների ձայները, երբ ամեն ինչ հայտնի է դառնում և ամեն ինչ երևան է ելնում»։

Իհարկե, Ցիցերոնի ողջ ճառը հռետորական արվեստի մի փայլուն նմուշ է, սակայն տվյալ դեպքում ուշադրություն դարձնենք հարցի մի կողմի վրա։ Մերկացնելով Կատիլինայի դավադրությունը, Ցիցերոնը նշում է, որ դավադիրների դավերը հայտնի են դառնում կամ էլ երևան են ելնում։ Ըստ էության տվյալ դեպքում նույնն են՝ «հայտնի դառնալ» և «երևան ելնել»։ Երկու բնորոշումներն էլ արտահայտում են միևնույն հասկացությունը։

Տրամաբանական այն հնարանքը, որի համաձայն միևնույն հասկացությունը տարբեր բառերի միջոցով արտահայտվելով, ավելի զգայական, ավելի համոզիչ է դարձնում խոսքը՝ այնքան է տարածված հռետորական արվեստում, որ հաճախ հռետորները ոչ միայն երկու, այլև երեք անգամ օգտագործում են միևնույն բառը կամ բառախումբը՝ հասկացությունն ընդգծելու համար։ Այդ ճառում Կատիլինայի դեմ ուղղված հիմնական միտքը Ցիցերոնը հետևյալով է արտահայտում. «...Այսպիսի պարագաներում, Կատիլինա, գնա այն ուղիով, որի վրա ոտք ես դրել, հեռացիր, վերջապես, քաղաքից. դարպասները բաց են, մեկնիր»։

Այստեղ, ըստ էության, օգտագործված են երեք տարբեր բառեր. «գնալ», «հեռանալ», «մեկնել», որոնք միևնույն հասկացություններն են արտահայտում։ Ցիցերոնը դիմում է այսպիսի միջոցի, քանի որ Կատիլինայի արտաքսումը քաղաքից հանդիսանում է իր ճառի հիմքը, այն նպատակը, որին պետք է հասներ հեղինակը իր ճառի օգնությամբ։

Հռետորական այս եղանակը մեծ տարածում է գտել նաև գեղարվեստական դրականության մեջ։ Գեղարվեստական խոսքի վարպետները նույնպես հաճախ միևնույն հասկացությունն արտահայտում են տարբեր բառերով։

Հաճախ է պատահում, որ հռետորը արտահայտում է ոչ միայն միևնույն հասկացությունը տարբեր բառերի միջոցով՝ հասնելու համար որոշ զգայական, էմոցիոնալ արդյունքի, այլև, ըստ էության, նույն միտքն արտահայտում է տարբեր բառերով կամ բառախմբերով։

Հռետորական արվեստի այս հնարանքների միջև որոշ տարբերություններ կան։ Այլ բան է, երբ ուղղակի միևնույն հասկացությունն է արտահայտվում տարբեր բառերի միջոցով և մեկ այլ բան, երբ կոնտեքստում տարբեր բառերով արտահայտված մտքերը հանգեցվում է միևնույն իմաստին։

Հաճախ հայտնի հռետորները կարողանում են գեղեցիկ կերպով զուգակցել այդ երկու տրամաբանական-հռետորական միջոցները։ Դարձյալ դիմենք Ցիցերոնի առաջին ճառին՝ ուղղված Կատիլինայի դեմ։ Այդ ճառում կա մի այսպիսի դատողություն. «Դու, վերջապես, այն ժամանակ կսպանվես, երբ անկուրելի կլինի գտնել մի մարդ, այնչափ անարգ, այնչափ ստոր, այնչափ քեզ հիշեցնող, որը հրաժարվեր ճիշտ համարելու իմ գործողությունները»։ Այստեղ նկատում ենք, որ «ստոր» և «անարգ» բառերը Ցիցերոնի մոտ արտահայտում են միևնույն հասկացությունները։ Միևնույն հասկացությունները տարբեր բառերով արտահայտելով, Ցիցերոնը ոչ միայն կրկնում է մի կարևոր գաղափար, այլ ավելի հուզական է դարձնում իր միտքը։ Սակայն «այնչափ անարգ», «այնչափ ստոր» բառերը կիրառելուց հետո, երբ Ցիցերոնն անմիջապես օգտագործում է «այնչափ քեզ հիշեցնող» բառախումբը, ապա դրանով իսկ նա կոնտեքստում ցույց է տալիս, որ «Կատիլինա» և «այնչափ անարգ» ու «այնչափ ստոր» հասկացություններն ըստ էության համիմաստ են։ Կոնտեքստի միջոցով նա կարողանում է ցույց տալ, որ ամենաստորը, ամենաանարգը ու Կատիլինան միևնույն հասկացություններն են տվյալ պայմաններում։ Այս խնդիրը Ցիցերոնն իրագործում է հռետորական բարձր արվեստով։

Սակավ չեն նաև այն դեպքերը, երբ հռետորներն օգտագործում են բառի և հասկացության փոխհարաբերության մեկ այլ կարևոր հատկությունը, երբ միևնույն բառն արտահայտում է տարբեր հասկացություններ։ Այսպիսի դեպքում, միևնույն բառի միջոցով արտահայտելով տարբեր հասկացություններ,

հռետորը ստեղծում է սրամիտ իրավիճակներ, սրամտում է, իսկ սրամտությունը հռետորական արվեստում ունի իր որոշակի տեղը։

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ հռետորները հմուտ կերպով օգտագործում են հասկացության ճկունության բնորոշ գծերից մեկը՝ կարողանում են տեղին օգտագործել հակասող և հակադեմ հասկացություններն իրենց նպատակների համար։ Ըստ որում, շատ ավելի լայն տարածում ունի հակադեմ հասկացությունների կիրառումը։ Օգտագործելով հակադեմ հասկացությունները, հռետորը ցույց է տալիս, որ նա ընդգրկում է տրամագծորեն հակառակ երևույթները և, հետևաբար, կարողանում է, ի վերջո, բացահայտել հակադրությունների միասնությունը։ Ըստ էության, դա դիալեկտիկական տրամաբանության պահանջ է, որը գիտակցորեն, թե ենթագիտակցորեն հաճախ կիրառել են նաև հին աշխարհի հռետորները։

Այսպիսի հնարանքի բազմապիսի օգտագործում մենք տեսնում ենք Մարքսի և Էնգելսի մոտ։ Մարքսի մահվան առթիվ ասված ճառում Էնգելսը նշում է. «...Մարքսը մի այնպիսի մարդ էր, որին ամենից ավելի էին ատում և որին ամենից ավելի էին զրպարտում։ Կառավարությունները՝ և՛ ինքնակալական, և՛ ռեսպուբլիկական, արտաքսում էին նրան, բուրժուաները՝ և՛ պահպանողական, և՛ ուլտրադեմոկրատական, մրցելով՝ նրա գլխին էին թափում զրպարտանք ու անեծքներ»[12]։

Հռետորական արվեստի էությունն ըմբռնելու համար չափազանց կարևոր է դատողության և նախադասության փոխհարաբերությունը և վերջինիս որոշ կողմերի իմաստավորումը պերճախոսության տեսանկյունից։ Հայտնի է, որ յուրաքանչյուր դատողություն արտահայտվում է նախադասության միջոցով։ Նախադասությունը դատողության՝ որպես մտքի որոշակի ձևի, լեզվական կրողն է։ Դատողությունը մեր գիտակցության մեջ առաջանում է նախադասության ձևով, ամրագրվում նախադասության մեջ և ուրիշների սեփականություն դառնում, այսինքն հաղորդակցվում դարձյալ նախադասության կերպարանքով։ Այլ կերպ ասած՝ առանց նախադասության ոչ մի դատողություն գոյություն չունի։ Սակայն այս նշված հատկություններով չեն սպառվում դատողության և նախադասության փոխհարաբերության բնութագրումները։ Եթե դատողության միջոցով մենք արտահայտում ենք որևէ միտք, ապա նախադասությունը հանդես է գալիս ոչ միայն որպես այդ մտքի լեզվական կրողը, այլև հնարավորություն է ընձեռում դրսևորել նաև մարդու հոգեկան խառնվածքի տարբեր նրբերանգները։ Ինչպես արդեն հայտնի է տրամաբանությանը նվիրված բազմաթիվ հետազոտություններից, այն նախադասությունն է դատողություն արտահայտում, որն իր մեջ պարունակում է հաստատում կամ ժխտում։ Եթե ղեկավարվենք այս սկզբունքով, ապա մենք կարող ենք ասել, որ անվերապահորեն դատողություն են արտահայտում բոլոր պատմողական նախադասությունները։ Ինչ վերաբերում է բացականչական և հրամայական նախադասություններին, ապա դրանք, չնայած անմիջականորեն դատողություն չեն արտահայտում, բայց միշտ էլ ենթադրում են որևէ միտք, բացականչություն կամ հրահանգ, հեղինակի ցանկության հաստատում և այլն։

Շատ ավելի բարդ է հարցական նախադասության և դատողության փոխհարաբերության հարցը։ Գոյություն ունեն մի քանի տեսակ հարցական նա-

---

12 «Հիշողություններ Մարքսի և Էնգելսի մասին», Երևան, 1958, էջ 397։

խոսքաստությունները՝ պարզ հարցական նախադասություն, որը ոչ դատողություն է արտահայտում և ոչ էլ ենթադրում է այդպիսին, հարցական նախադասություն, որը չնայած անմիջականորեն դատողություն չի արտահայտում, բայց որոշակիորեն ենթադրում է մի ինչ-որ դատողություն, մի ինչ-որ հաստատում կամ ժխտում և, վերջապես, հարցական նախադասությունների միջև պետք է առանձնացնել որոշ տիպի հարցական նախադասություն։ Վերջինս ձևով հարցական է, բայց ըստ էության հավասարազոր է պատմողական նախադասության և անմիջականորեն արտահայտում է դատողություն։ Դա կոչվում է հռետորական տիպի հարցական նախադասություն, որը թերևս խոսքի միակ կատեգորիան է, որ իր անվամբ անմիջականորեն առնչվում է հռետորության հետ։

Կատիլինայի դեմ իր հռչակավոր ճառում Ցիցերոնն ասում է. «Մինչև ե՞րբ պիտի, վերջապես, շարաշահես մեր համբերությունը, Կատիլինա։ Դեռ երկա՞ր պիտի համառես քո վայրի խելագարությամբ։ Մինչև ե՞րբ, դու, վերջապես, մոռանալով ամեն չափ ու սահման, պիտի գոռոզանաս քո հանդգնությամբ։ Մի՞թե քեզ վրա ոչ մի ազդեցություն չգործեցին ոչ զինվորական պահպանությունը, որը գիշերը պաշտպանում էր Պալատինյան բլուրը, ոչ քաղաքային պատկերները, ոչ ժողովրդի սարսափը, ոչ դրսում հավաքված բարեմիտ քաղաքացիների բազմությունը, ոչ սենատի նիստերի այս անձեռնամխելի վայրը, ոչ էլ այստեղ ներկա գտնվող սենատորների դեմքերի արտահայտությունը։ Մի՞թե դու չես զգում, որ քո մտքերը մեզ համար շատ պարզ են։ Մի՞թե դու չես նկատում, որ կաշկանդված ես, քանի որ այստեղ բոլորը գիտեն քո դավադրության մասին։ Ո՞րը մեզանից, քո կարծիքով, տեղեկություններ չի ստացել այն մասին, թե դու ի՞նչ ես արել այս գիշեր, որտե՞ղ էիր հավաքել, ի՞նչ որոշումներ ընդունեցիր։ Օ՜, ժամանակներ, օ՜, բարքեր...»։

Այս հատվածում բազմաթիվ հարցական նախադասություններ պնդում են որևէ միտք՝ հաստատման կամ ժխտման ձևով, հետևաբար, ուղղակի արտահայտում են դատողություն։ Երբ դիմում ենք՝ «Ո՞ւմ համար պարզ չէ, որ ամառը հաջորդում է գարնանը, իսկ ձմեռը հաջորդում է աշնանը» հարցով, ապա ոչ թե ցանկանում ենք իրոք իմանալ, թե կա մեկը, որ չգիտե տարվա եղանակների այդ հաջորդականությունը, այլ միայն ընդգծել այն միտքը, որ բոլորին էլ հայտնի է, որ ամառը հաջորդում է գարնանը, ձմեռը հաջորդում է աշնանը և այլն։

Հարց է առաջանում, եթե այսպիսի հարցական-հռետորական բնույթի նախադասությունների անմիջական իմաստն է ուղղակի արտահայտել որևէ դատողություն, որևէ հաստատում կամ ժխտում և, հետևաբար, այդ հարցական նախադասությունները հավասարազոր են պատմողական-հարցական նախադասության, ապա ինչո՞ւ ենք մեր միտքն արտահայտում հարցական նախադասության ձևով և ոչ թե ուղղակի պատմողական նախադասությամբ։ Հռետորական տիպի հարցական նախադասության մեջ կատարվում է միանգամից երկու գործողություն։ Նախ, այն իսկապես ընդգծում է որևէ միտք՝ հաստատման կամ ժխտման ձևով և երկրորդ, այդ մտքին տրվում է զգացմունքային ձև, հարցի ձև, իսկ հայտնի է, որ հարցն հոգեկան ինչ-որ ապրումների արտահայտիչ է։ Հետևաբար, հռետորական տիպի հարցական նախադասության միջոցով մենք շատ ավելի զգացմունքային երանգ ենք տալիս մեր մտքին։ Ահա թե ինչու հռետորական տիպի հարցական նախադասությունները խիստ տարածված են պերճախոսության արվեստում։

Այդպիսի հռետորական բնույթի հարցական նախադասություններից է կազմված լորդերի պալատում 1812 թ. փետրվարի 12-ին Ջորջ Բայրոնի արտասանած ճառը՝ ի պաշտպանություն ըմբոստացած ջուլհակների։ «Մի՞թե մեր օրինագրություններում բավականաչափ պատիժ չկա, մի՞թե մեր քրեական օրենսդրքում այնքան քիչ արյուն կա, որ այժմ հարկավոր է այն ամբողջ շատրվանով բաց թողնել, որը ծառանում է մինչև երկինք, կարծես նրա համար, որ բարձրաձայն ողբա ձեզ համար։ Ինչպե՞ս եք դուք ձեր օրինադիծը կենսագործում կյանքում։ Մի՞թե կարող եք դուք մի ամբողջ դքսություն վերածել բանտի։ Դուք ուզում եք կախաղաններ կանգնեցնել բոլոր դաշտերում և կախել մարդկանց ինչպես աղաձկներ»։

Երբ խոսքը վերաբերում է հռետորական-հարցական նախադասությանը, ապա հռետորը պետք է անպայման նկատի ունենա տրամաբանական կոնտեքստը, այսինքն այն, թե ո՞ւմ է ուղղված հարցը, ո՞րն է նրա նպատակը, ինչպե՞ս պետք է ընկալվի այդ հարցն ունկնդիրների կողմից, արդյո՞ք ունկնդիրներն ի վիճակի են զգալու, որ տվյալ հարցական նախադասությունը հռետորական երանգ ունի և այլն։ Առանց այս հանգամանքները հաշվի առնելու հռետորական տիպի հարցական նախադասությունը չի կարող հասնել իր նպատակին։ Ավելին. հռետորական տիպի հարցական նախադասության օգտագործման հնարքը կարող է ձախողվել, եթե հաշվի չառնվի հռետորի և ունկնդրի միջև եղած կապը, ունկնդրի հնարավորությունները՝ հարցի ըմբռնման տեսակետից։ Միևնույն հարցը կարող է մի դեպքում հանդես գալ որպես հարց, պարզ հարցական նախադասություն, մի այլ դեպքում այն կարող է դառնալ հռետորական-հարցական նախադասություն։

Պերճախոսությունում մեծ դեր է խաղում տրամաբանական շեշտը։ Նախ, պետք է տարբերել տրամաբանական շեշտը քերականական շեշտից։ Տրամաբանական շեշտը չի ընկնում այս կամ այն վանկի վրա, ինչպես քերականական շեշտը։ Տրամաբանական շեշտի միջոցով մենք ընդգծում ենք այս կամ այն հասկացությունը, որը կարող է արտահայտված լինել մեկ կամ մի քանի բառով կամ բառախմբով։ Տրամաբանական շեշտն իր ստույգ տեղն ունի մտքի կատեգորիաների մեջ, դատողության կազմում։ Հայտնի է, որ տրամաբանական շեշտով մենք ընդգծում ենք դատողության պրեդիկատը և հենց այն պատճառով, որ եթե դատողության սուբյեկտը մեզ գաղափար է տալիս քննարկվող առարկայի մասին ընդհանրապես, պատկերացում տալիս մտքի օբյեկտի մասին, ապա պրեդիկատը միշտ նոր հատկություն է հաստատում կամ ժխտում մտքի օբյեկտի նկատմամբ։ Տրամաբանական շեշտի միջոցով մենք միշտ ընդգծում ենք այն նորությունը, որը հաղորդում ենք ունկնդիրներին։ Ահա թե ինչու չափազանց կարևոր է տրամաբանական շեշտի դերը հռետորական արվեստում։

Մարքսի մասին Վ. Լիբկնեխտը գրում է. «Չեմ կարող ասել, որ Մարքսը լավ արտասանող էր. նա, ինչպես ասում են, մի քիչ չափազանցնում էր դերը, բայց և այնպես նա միշտ ճիշտ էր դնում տրամաբանական շեշտը, ընդգծելով նախադասության իմաստը...»[13]։

Բոլոր ժամանակների հռետորները շատ լավ են նկատել, որ տրամաբանական շեշտով մենք բացահայտում ենք ենթատեքստը, դարձնում որևէ միտք

---

13 «Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», 1934, էջ 277։

էական, ցանկանում ենք ունկնդրին հասցնել այն, ինչ որ համարում ենք կարևորագույն՝ տվյալ դեպքում։

Վ. Ի. Լենինն իր մի շարք աշխատություններում, որոնք հռետորական արվեստի նմուշներ են, միշտ էլ օգտագործում է տրամաբանական շեշտը։ ՌԿ(բ)Պ VIII համագումարի փակման ժամանակ արտասանած ճառում Լենինը ասում է. «Մենք համոզված ենք, որ սա կլինի վերջին ծանր կիսամյակը»[14]։ Այնուհետև նշելով հունգարական հեղափոխության դժվարությունները, Վ. Ի. Լենինը հետևյալն է գրում. «Ընկերնե՛ր, հունգարական հեղափոխության դժվարությունները հսկայական են։ Ռուսաստանի համեմատությամբ այս փոքրիկ երկիրը շատ ավելի հեշտ կարող է խեղդվել իմպերիալիստների կողմից։ Բայց ինչպիսին էլ լինեն Հունգարիայի առաջ անկասկած դեռ կանգնած դժվարությունները, մենք այստեղ, բացի Սովետական իշխանության հաղթանակից, բարոյական հաղթանակ ունենք»[15]։ Վ. Ի. Լենինը ընդգծում է «բարոյական հաղթանակ» հասկացությունն արտահայտող բառերը։

Բերենք մի հատված Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրոկրիտիցիզմ» աշխատությունից, որը վկայում է այն մասին, թե ինչպես է հեղինակը օգտագործում տրամաբանական շեշտը և վերջինիս միջոցով աշխատում ցույց տալ, թե որն է էականը հարցի ըմբռնման գործում. «Աճելով Ֆոերբախից և առնալով համբակների դեմ մղվող պայքարում, Մարքսն ու Էնգելսը բնականաբար իրենց առավելագույն ուշադրությունը դարձնում էին մատերիալիզմի փիլիսոփայությունը մինչև վերևը կառուցելու-ավարտելու վրա, այսինքն՝ ո՛չ թե մատերիալիստական գնոսեոլոգիայի, այլ պատմության մատերիալիստական ըմբռնման վրա։ Դրանից է, որ Մարքսն ու Էնգելսն իրենց երկերում ավելի ընդգծում էին դիալեկտիկական մատերիալիզմը, քան թե դիալեկտիկական մատերիալիզմը, ավելի պնդում էին պատմական մատերիալիզմի վրա, քան թե պատմական մատերիալիզմի»[16]։

Եթե այս նախադասությունը կարդանք առանց տրամաբանական շեշտի, ապա ոչ միայն չի հասկացվի նրա միտքը, այլև արտաքուստ գործ կունենանք կրկնության հետ։ Մինչդեռ տրամաբանական շեշտի միջոցով Վ. Ի. Լենինը մի պարզ նախադասությամբ արտահայտել է Մարքսի և Էնգելսի պատմական մեծ առաքելությունը փիլիսոփայության տեսության բնագավառում, նրանց կատարած հեղափոխական հեղաշրջման էությունը փիլիսոփայության մեջ։

Հաճախ հռետորներն իրենց միտքը ընդգծելու, պարզեցնելու համար ոչ միայն դիմում են տրամաբանական շեշտի, այլև մի այնպիսի տրամաբանական հնարանքի, ինչպիսին համեմատությունն է։ Ցիցերոնին են պատկանում այն խոսքերը, թե՝ կառավարությունը խոսող օրենք է, իսկ օրենքը՝ մունջ կառավարություն։ Այդպիսի համեմատություններով հռետորները միշտ էլ աշխատել են՝ ոչ միայն պարզեցնել իրենց միտքը, այլև այն պատկերավոր ձևով արտահայտել և հետևաբար ամրագրել մարդկանց գիտակցության մեջ, լավ հասկանալով, որ այն հուզական բնույթ ունի, ավելի խոր հետքեր է թողնում մարդկանց գիտակցությունում։ Իր խիստ գիտական ոճը Մարքսը հաճախ համեմում էր հա-

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 266։
15 Նույն տեղում, էջ 267։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 14, էջ 442։

մեմատություններով։ Որքա՞ն տպավորիչ են, օրինակ, նրա խոսքերն այն մասին, որ «հերոսների մահը նման է արևամուտին»։

Տրամաբանության տարբեր հնարներն օգտագործելով, հռետորը մի նպատակ է հետապնդում. առաջադրված դրույթն այնպես ապացուցել, որ այն համոզեցուցիչ լինի ունկնդիրների, ընթերցողների համար։ Ահա թե ինչու տրամաբանության ամբողջ զինանոցն առանձնահատուկ նշանակություն ունի հռետորական արվեստի համար։

ВЗАИМООТНОШЕНИЕ ЛОГИКИ И РИТОРИКИ

С. Б. БАГДАСАРЯН

Резюме

Взаимоотношение логики и риторики выдвигает целый ряд проблем, каждая из которых может стать предметом специальных исследований. В частности представляет интерес взаимоотношение доказательства и убеждения в искусстве красноречия. При анализе данного вопроса возникает необходимость различать содержательную, формальную, формализованную логику, а также разные виды истины— фактическую и логическую и дифференцированно показать их роль и значение в риторике.

Особое значение в искусстве красноречия приобретает знание и сознательное применение всей гаммы взаимоотношения логических и грамматических категорий. Это видно из анализа взаимоотношения слова и понятия, предложения и суждения, грамматического и логического ударения и т. д.